ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՎ ԲԱԲԿԵՆ ՉՈՒՔԱՍԶՅԱՆԸ

Ծանր հիվանդությունից հետո, նոյեմբերի 2-ին 74 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց անվանի հայագետ-արևելագետ Բաբկեն Լևոնի Չուքասզյանը:

Բաբկեն Չուքասզյանը ծնվել է 1923 թվականի մարտին Իրանի Թավրիզ քաղաքում, ուր և ստացել է իր նախնական կրթությունը:

1946 թվականին Չուքասզյանների գերդաստանը ներգաղթում է Հայաստան: Նույն թվականին երիտասարդ Բաբկենը ընդունվում է Երևանի Պետական համալսարան և 1951 թվականին ավարտում բանասիրական ֆակուլտետի հայկական բաժինը:

1954 թվականին նա ընդունվում և 1957 թվականին ավարտում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան:

1958 թվականին աշխատանքի է անցնում գրականության ինստիտուտում, սկզբում աշխատում է որպես գիտնական քարտուղար, ապա նշանակվում փոխտնօրեն գիտության գծով:

1962 թվականին «Հայ-իրանական գրական առնչությունները...» թեմայով պաշտպանում է դիսերտացիա և ստանում գիտության թեկնածուի կոչում: Նույն թվականին նրա ավարտաճառը լույս է տեսնում առանձին գրքով:

1965 թվականին Բ. Չուքասզյանը փոխտնօրենի պաշտոնով աշխատանքի է հրավիրվում Մաշտոցի անվան Մատենադարան, ուր և աշխատեց մինչև կյանքի վախճանը՝ 1997 թվականը: Նրա գիտական նախաձեռնությունների մեջ կարևոր տեղ է գրավում հայ-իրանական գրական առնչությունների խնդիրները: Այդ տարիներին ինչպես Հայրենիքում, այնպես էլ արտասահմանում լույս են տեսնում նրա գիտական մենագրություններն ու՝ հետազոտական հոդվածները: 1974 թվականին նրա աշխատասիրությամբ լույս է տեսնում Հովհաննես Սեբաստացու «Պատմութիւն Սեբաստիոյ» և «Բժշկարան ձիո և առ հասարակ գրաստնոյ» (1980 թ.) գործերը: Սրանց հաջորդում է Սայաթ Նովայի «Խաղերի» և Հակոբ Մեղապարտի «Ուրբաթագրքի» ու «Տաղարանի» հրատարակությունները:

1966 թվականին Չուքասզյանը հրապարակում է «Խրատ Նուշիրվանի» և Եղիա Մուշեղյանի «Թուրքերեն-հայերեն բառարանը» (1985 թ.): Ծարունակելով հրատարակչական գործունեությունը, նա 1994 թվականին լույս է ընծայում «Գևորգ դպիր Պալատեցու կյանքի և գործունեության տարեգրությունը», ինչպես նաև «Հայրենադարձ իրանահայ դեմքեր» (1997 թ.) խորագրով գրքերը և այլն:

Բ. Չուքասզյանը մեծ ու շնորհակալ աշխատանք է կատարել հայերեն ձեռագրերի հավաքման և Մատենադարանի ֆոնդերի հարստացման գործում:

Հիշատակը վաստակավորաց օրհնյալ եղիցի...

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու